Ուխտերի և արարողությունների միջոցով Փրկիչի հետ կապված

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՆԱՐԿ ՏԱՐԱԾՔԻ, ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ, ՄԻՍԻԱՅԻ, ՑՑԻ և ՃՅՈՒՂԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս ուսուցման ընթացքում դուք կտեսնեք և կլսեք մեր Երկնային Հոր զավակների փորձառությունները հոգևոր զարգացման տարբեր փուլերում, երբ նրանք ձգտում են ուխտերի և արարողությունների միջոցով կապվել Փրկիչին: Դուք կլսեք, թե որքանով են սիրելը, կիսվելը և հրավիրելը օգնել նրանց ուրախությամբ առաջ ընթանալ ուխտի արահետով: Դուք կհասկանաք, թե ինչ կարևոր դեր են կատարում ավետարանով կիսվելը, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը և կարիքավորների մասին հոգալը: Բայց ամենից առաջ դուք կտեսնեք, որ «ամեն բան [կ] բովանդակի Քրիստոսումը» (Եփեսացիս 1.10):

ԿՅԱՆՔԻ 1-ԻՆ ՓՈՒԼ. ԵՐԵԽԱՆԵՐ

Դիտեք տեսանյութը նախագահ Ջոյ Դ. Ջոնսի և երեխաների հետ, ապա քննարկեք, թե ինչ եք պատրաստվում անել, որպեսզի օգնեք երեխաներին ուխտի արահետով ընթանալիս կապվել Փրկիչի հետ:

- Հոգին ի՞նչ ուսուցանեց մեզ այս տեսանյութը դիտելիս:
- Սիրելու, կիսվելու և հրավիրելու սկզբունքներն ինչպե՞ս են օգնում երեխաներին, երբ նրանք ձգտում են կիսվել ավետարանով:
- Ինչպե՞ս է ծառայությունն օգնում երեխաներին մկրտությունից հետո մնալ ուխտի արահետի վրա:

ԿՅԱՆՔԻ 2-ՐԴ ՓՈՒԼ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Դիտեք տեսանյութը նախագահ Բոնի Հ. Քորդոնի, Սթեֆեն Ջ. Լանդի և երիտասարդներ հետ, ապա քննարկեք, թե ինչ եք պատրաստվում անել, որպեսզի օգնեք երիտասարդներին ուխտի արահետով ընթանալիս կապվել Փրկիչի հետ:

- Ինչպե՞ս կարող ենք օգնել երիտասարդներին պահել իրենց մկրտության ուխտերը և պատրաստվել ուխտի արահետով ընթանալ դեպի հաջորդ քայլը:
- Սիրելու, կիսվելու և հրավիրելու սկզբունքներն ինչպե՞ս են օգնում երիտասարդներին մասնակցել տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքներին:
- Ինչպե՞ս կարող ենք օգնել երիտասարդներին հույսի և պատկանելության զգացում ունենալ, երբ նրանք կապվում են Փրկիչի հետ:

ԿՅԱՆՔԻ 3-ՐԴ ՓՈՒԼ. ՉԱՓԱՀԱՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Դիտեք տեսանյութը նախագահ Մարկ Լ. Փեյսի և չափահաս երիտասարդների հետ, ապա քննարկեք, թե ինչ եք պատրաստվում անել, որպեսզի օգնեք չափահաս երիտասարդներին ուխտի արահետով ընթանալիս կապվել Փրկիչի հետ:

- Ի՞նչ ենք սովորում սիրելու, կիսվելու և հրավիրելու օրինակներից, որոնք ուրիշներն առաջարկում են մեզ:
- Ինչպե՞ս կարող ենք օգնել չափահաս երիտասարդներին հույսի և պատկանելության զգացում ունենալ, երբ ավելի ինքնապահով են դառնում և ծառայում ուրիշներին: Ինչպե՞ս կարող ենք օգնել նրանց իմանալ, որ Տիրոջ եկեղեցում իրենց կարիքն ունեն:
- Եկեղեցում ի՞նչ դեր են խաղում բովանդակալից միջոցառումներն ու հոգատար ղեկավարները՝ չափահաս երիտասարդներին Փրկիչին կապելու գործում:

ԿՅԱՆՔԻ 4-ՐԴ ՓՈՒԼ. ՉԱՓԱՀԱՍՆԵՐ

Դիտեք տեսանյութը նախագահ Ջին Բ. Բինգհեմի և չափահասների հետ, ապա քննարկեք, թե ինչ եք պատրաստվում անել, որպեսզի օգնեք չափահասներին ուխտի արահետով ընթանալիս կապվել Փրկիչի հետ:

- Ինչպե՞ս են մեր ուխտերը բժշկում մեզ և օգնում մնալ ուղու վրա, նույնիսկ, դժվարին ժամանակներում:
- Ի՞նչ ուղիներ ենք գտել, որ օգնենք անդամներին ուխտերի և արարողությունների միջոցով իրենց և ուրիշներին կապել Փրկիչի հետ:
- Հոգևոր ինքնապահովման զարգացումն ինչպե՞ս է օգնում մեզ սիրել, կիսվել և հրավիրել:

ՆՅՈՒԹԵՐ ՏԱՐԱԾՔԻ, ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ, ՄԻՍԻԱՅԻ, ՑՑԻ, ԾԽԻ ԵՎ ՃՅՈՒՂԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեխաների և երիտասարդների համար

ԵՐԵԽԱՆԵՐԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԱՐԿ

Երեխաների և երիտասարդների ծրագիրը կոչված է՝ զորացնելու աճող սերնդի հավատքն առ Հիսուս Քրիստոս և օգնելու երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին առաջադիմել ուխտի արահետով, երբ նրանք բախվեն կյանքի մարտահրավերներին: Այն օգնում է, որ երեխաներն ու երիտասարդներն իրենց առօրյա կյանքում մասնակցեն Իսրայելի հավաքման գործին և փրկության ու վեհացման աշխատանքներին: Այն կենտրոնացած է տան վրա և աջակցվում է Եկեղեցու կողմից:

ՀՈՒՅՍԵՐ ԱՃՈՂ ՍԵՐՆԴԻ ՀԱՄԱՐ

Երեխաների ու երիտասարդների ծրագիրն օգնում է աճող սերնդին տարբեր եղանակներով աճել, ներառյալ՝ հայտնության, ազատ կամքի և հարաբերությունների միջոցով: Անհատները սովորում են ստանալ և գործել ըստ իրենց անձնական հայտնության, երբ նրանք գործադրում են ազատ կամք և իրենց համար ընտրում են աճելու հնարավորություններ: Դա նաև տեղի է ունենում այն ժամանակ, երբ երիտասարդները սովորում են ղեկավարել քվորումի և դասարանների նախագահություններում: Նրանք հարաբերություններ են ստեղծում իրենց ընտանիքների, իրենց ղեկավարների և իրենց տարիքի մյուս մարդկանց հետ, երբ միասին աշխատում, ծառայում և հասկանում են, որ իրենք պատկանում են և իրենց կարիքն ունեն Տիրոջ աշխատանքում:

ՈՐՏԵՂԻՑ ՊԵՏՔ Է ՍԿՍԵՆՔ ԱՅՍՕՐ

Մենք հրավիրում ենք երեխաներին, երիտասարդներին, նրանց ծնողներին և ղեկավարներին պարտավորվել կամ վերահաստատել Փրկիչի նման դառնալու իրենց պարտավորությունը՝ մասնակցելով Նրա աշխատանքին: Այդ ջանքերը չպետք է դժվար լինեն: Ահա մի քանի պարզ խորհուրդներ սկսելու համար.

Ծնողներ

- Հավաքեք ձեր ընտանիքը ավետարանի ուսումնասիրության համար: *Եկ, հետևիր ինձ* նյութերը կարող են օգնել: Կարող եք քննարկել նմանատիպ թեմաներ՝ ուխտերը, հայտնությունը, ազատ կամքը և հայրապետական օրհնությունները:
- Ծրագրեք ընտանեկան միջոցառումներ: Ինչպե՞ս կարող եք անվտանգ ծառայել ձեր հարևանությամբ կամ համայնքում ապրող որևէ մեկին: Որտեղ մատչելի է, JustServe նախաձեռնությունը կարող է օգնել գաղափարներ գտնել:
- Առանձին հանդիպեք յուրաքանչյուր որդու և դստեր հետ: Քննարկեք նրանց հետաքրքրությունները և խոսեք այն մասին, թե ինչպես են նրանք ցանկանում աճել: Օգնեք և աջակցեք նրանց անձնական զարգացմանը: Խոսեք այն մասին, թե ինչ նպատակներ են նրանք դրել կամ ինչի վրա են ցանկանում աշխատել:

Երեխաների միության ղեկավարներ

- Տեղեկացված եղեք ձեր երեխաների ընտանեկան հանգամանքներից և հայտնություն փնտրեք՝ նրանց անհատապես օգնելու համար:
- Սկսեք անցկացնել կիրակնօրյա ժողովներ և Երեխաների միության միջոցառումներ՝ անձամբ կամ հեռավար (երբ անվտանգ է և թույլատրված):
- Մի անհանգստացեք անհատների նպատակները միջոցառումների հետ կապելու համար: Կենտրոնացեք երեխաներին ու նրանց ընտանիքներին կապելու և օրհնելու վրա՝ հատկապես, երբ նրանք կարիք ունեն կամ օգնություն են խնդրում:

Երիտասարդների չափահաս ղեկավարներ

- Սկսեք անցկացնել կիրակնօրյա ժողովներ, քվորումի և դասարանի միջոցառումներ՝ անձամբ կամ հեռավար (երբ անվտանգ է և թույլատրված): Խրախուսեք երիտասարդներին անգիր սովորել և ժողովներ անցկացնել Երիտասարդ կանանց և Ահարոնյան քահանայության քվորումի նոր թեմաներով:
- Կանչեք, ձեռնադրեք և կողմնորոշում տրամադրեք քվորումի և դասարանների նախագահություններին: Օգնեք նրանց անցկացնել նախագահության կանոնավոր ժողովներ, ծրագրել և ղեկավարել կիրակնօրյա ժողովներն ու միջոցառումները: Անցկացրեք ծխի երիտասարդների խորհուրդներ և խրախուսեք մասնակցությունը միսիոներական, տաճարային և ընտանեկան պատմության համակարգման ժողովներին: Ըստ անհրաժեշտության՝ մենթոր հանդիսացեք և աջակցեք նախագահություններին՝ առանց ստանձնելու իրենց պարտականությունները: Օգնեք նախագահություններին սովորել ղեկավարման հմտությունները՝ օգտագործելով քվորումի և դասարանի նախագահության նյութերը:
- 2021 թվականին ծրագրեք և անցկացրեք երիտասարդների ճամբարներ և երիտասարդների համաժողով՝ հետևելով անվտանգության ուղեցույցներին:
- Մի անհանգստացեք անհատների նպատակները միջոցառումների հետ կապելու համար: Ձեր եռանդը ներդրեք երիտասարդների հետ անձամբ ընկերանալու համար: Կարող եք նաև օգնել քվորումի և դասարանների նախագահություններին միջոցառումները կապել երիտասարդների կարիքների հետ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՍ CHILDRENANDYOUTH.CHURCHOFJESUSCHRIST.ORG:

Մեծահասակների համար

ԵԱ ՀԱՎԱՔՄԱՆ ՎԱՅՐԵՐ

Առաջին Նախագահությունը հաստատել է այն վայրերը, որտեղ կարող են հավաքվել երիտասարդ ամուրիները՝ ելնելով տարածքի կարիքներից: Հավաքման վայրը նշանակված վայր է գոյություն ունեցող շենքում (օրինակ՝ հավաքատան կամ ինստիտուտի շենքում), որտեղ երիտասարդ ամուրիները և նրանց ընկերները կարող են հավաքվել, որպեսզի մասնակցեն հետևյալ միջոցառումներից մի քանիսին կամ բոլորին (ելնելով տեղական կարիքներից և միջոցներից).

- Կրոնական կրթություն և ավետարանի ուսուցում (ներառյալ ինստիտուտը)
- Ծառայություն և սոցիալական միջոցառումներ
- Տաճարային և ընտանեկան պատմության միջոցառումներ
- Ինքնապահովման և կրթական հնարավորություններ
- Միսիոներական և համայնքային գործունեության հետ կապված միջոցառումներ
- Եկեղեցու կողմից առաջարկվող այլ ծրագրեր

Հավաքման բոլոր վայրերը պետք է հաստատված լինեն Տարածքային Նախագահության կողմից և վերահսկվեն ցցերի նախագահների և եպիսկոպոսների կողմից:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՄՈՒՐԻՆԵՐԻ և ՉԱՓԱՀԱՍ ԱՄՈՒՐԻՆԵՐԻ ԿՈՉՈՒՄՆԵՐ

Քաղաքականության վերջին փոփոխությունները և պարզաբանումները լուծել են Տիրոջ Եկեղեցում ծառայելու սահմանափակումների վերաբերյալ հնարավոր թյուրըմբռնումները և կեղծ ավանդույթները միայնակ անդամների համար: Քաղաքականության այս փոփոխություններն ու պարզաբանումները, որոնք հաստատվել են Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի կողմից և ներառվել *Ընդհանուր ձեռնարկի* մեջ, բացատրում են, որ երիտասարդ ամուրիները և չափահաս ամուրիները կարող են օրհնվել և օրհնել ուրիշներին բազմաթիվ կոչումներում, ներառյալ՝ որպես ցցի և ծխի ղեկավարներ: Նույն քաղաքականությունն այժմ գործում է Եկեղեցու բոլոր միավորներում, ներառյալ երիտասարդ ամուրիների և չափահաս ամուրիների միավորներում: Ցցերի նախագահություններում, եպիսկոպոսությունում և ցցի Սփոփող միության նախագահություններում ծառայող երիտասարդ ամուրիների և չափահաս ամուրիների նկատմամբ սահմանափակումները հանվել են երիտասարդ ամուրիների և չափահաս ամուրիների միավորներում:

Միայնակ անդամները կարող են ծառայել ղեկավար կոչումներում, ներառյալ՝ ծխի և ցցի կազմակերպությունների նախագահություններում, երեցների քվորումի նախագահություններում, եպիսկոպոսության խորհրդականներ, բարձրագույն խորհրդականներ և ցցի նախագահության խորհրդականներ:

Կարիք ունենք և ողջունում ենք բոլորին. Սիրեք, կիսվեք և հրավիրեք

Երբ անդամները մաքառում են պատկանելության զգացում ունենալու համար, երբեմն ղեկավարներն ու մյուսներն ակամայից այնպիսի բաներ են ասում, որոնց պատճառով անդամները զգում են, որ իրենք չեն պատկանում կամ իրենց կարիքը չկա:

Սիրելու, կիսվելու և հրավիրելու մասին այս ճշմարտությունները կօգնեն մեզ ողջունել բոլորին, որ նրանք մասնակցեն, ընկերանան և պատկանեն Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն:

- Բոլոր մարդիկ Աստծո սիրելի զավակներն են՝ աստվածային բնույթով և ճակատագրով: Բացի հավերժական օրհնություններից, որոնք Նա խոստանում է հավատարիմներին, Նա ուզում է օրհնել Իր զավակներին այժմ՝ այս կյանքում:
- Աստծո յուրաքանչյուր զավակը անհրաժեշտ է Նրա արքայությունը կառուցելու գործում:
- Սկսեք սիրել, որպեսզի մարդը զգա, որ ինքը պատկանում է և իր կարիքը կա: Լսեք և հասկացեք նրա փորձառությունները: Մի՛ ենթադրեք, որ դուք արդեն գիտեք կամ հասկանում եք:
- Մենք չունենք մեր կամ այլ մարդկանց բոլոր հարցերի պատասխանները այս կյանքում: Օրինակ, մենք չգիտենք թե ինչն է պատճառը, որ մարդիկ բախվում են որոշակի մարտահրավերի:
- Անկեղծ եղե՛ք և մի՛ քննադատեք: Ողջունեք բոլորին, կյանքի որ փուլում էլ նրանք լինեն: Օգնություն առաջարկեք և կենտրոնացեք այն ճշմարտության վրա, որ Եկեղեցում յուրաքանչյուր մարդու կարիքը կա:
- Եթե ակամայից վիրավորական խոսք եք ասում, մի արդարացեք. ներողություն խնդրեք, ապա ներում փնտրեք և ձգտեք ավելի լավը դառնալ:

ՀԱՏՈՒԿ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՍ COUNSELINGRESOURCES.CHURCHOFJESUSCHRIST.ORG:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՍՔԵՐ

- **Բարի գալուստ: Ձեր կարիքը կա և ձեզ սիրում են: Շնորհակալություն գալու համար:**
- **Պատմեք ինձ ձեր փորձի մասին: Ի՞նչ եք ցանկանում, որ հասկանամ:**
- **Մենք ողջունում ենք ձեզ և ձեր կարիքն ունենք, ձեր կյանքի որ փուլում էլ լինեք: Ինչպե՞ս կարող ենք մենք օգնել ձեզ: Ինչպե՞ս դուք կարող եք օգնել մեզ:**
- **Աստված ուզում է, որ դուք այսօր երջանիկ լինեք: Նրա ավետարանը հույս և երջանկություն է պարգևում Նրա բոլոր զավակներին:**



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԱՅՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎ, ԱՊՐԻԼ 2021 Թ.

© 2021 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 3/21 PD60012741 201 Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում